ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԱՏ.12/2787

«18» 08 2021թ.

«ՎԱԼՍԱ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Խուդյակովի 84/4-50
Հեռ. +37494090333
Էլ. հասցե՝ valsa2020@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վալսա» ՍՊ ընկերության միջև 26.05.2021թ.-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-21-3/4-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ «Վալսա» ՍՊ ընկերությունը պարտավորվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 400 հատ ռադիոընդունիչ, սակայն վերջինիս կողմից նշված ապրանքները չեն մատակարարվել:

Հաշվի առնելով վերը նշված ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.08.2021թ.-ին ամբողջությամբ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Վալսա» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 49,800 (քառասունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժ, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար՝ 398,400 (երեք հարյուր իննսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 597,600 (հինգ հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Ն. ՅՈԼՉՅԱՆ